



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
629

1873

1999

1522 4)




ԸՆՏԵՐ 138

ԽՈՐՀՐԻԱԾՈՒԹՅՈՒՆԻ

ԵՐԵՒԱՆԻ

ՀԵՂԻՆԱԿԱՅ



ԹԱՐԳՄԱՆՆԵՑ

Ա. Ա. ԲԱՐՅՈՒՆԻ

ԳՆԼ. ՓԵՐՏՆԵՆ

Կ. ՊՈԼԻՍ

ԱՍՏՆ ԱԼՓԸ ՃԵՄԼԸ-ԽԱՆ

- 1873 -

ԽԱՏԻՔ

ԽՈՐՀՐԴՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԵՐԵՎԱՆ

ՀԵՂԻՆԱԿԱՑ



ԸՆՏԻՔ

ԽՈՐՀՐԳԱԺՈՒԹԻՒՆՔ

ԵՐԵՒԵԼԻ

ՀԵՂԻՆԱԿԱՑ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

Ն Գ Ա Ղ Ղ Ի Ա Ր Ի Ի Ի

Ց Գ Գ Ա Լ Փ Ա Գ Ճ Ե Ա Ն

Կ. ՊՈԼԻՍ

ԱՄՄԱ ԱԼՓԸ ՃԵՄԸ-ԽԱՆ

— 1873 —

43826-4.



28245-62

7629-60

29 629

ՅԱՌԵԱՄԱՐԵՆ

Քաջ համոզուած բլավով որ ամեն գիտութիւններէ աւելի բարոյակա-
նութիւնը միայն կրնայ ճշմարտապէս մեծ
ու յարգելի ընել զմարդ, ընտիր մատե-
նագիրներէ հաւաքելով թարգմանե-
ցինք սոյն խորհրդածութիւնքը, որոց մէջ
գտնուած գեղեցիկ սկզբունքներն ու ըն-
տիր բարոյականներն անշուշտ Հայ ման-
կուոյն միտքը զարգացնելու և սիրտն
ազնուացնելու մեծապէս պիտի նպաստեն:

Հատ կը փափաքինք որ Մեծարգոյ
դասատուք՝ իբր նուէր կաղանդի՝ այս
գրքոյկը գործածեն, որով մեծ ծառայու-
թիւն մը մատուցած կըլլան իրենց աշա-
կերտաց:

ԸՆՏԻՐ

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ

ԵՐԵՒԵԼԻ

ՀԵՂԻՆԱԿԱՅ

ՄԱՏԱՄ ՏԸԼԱ ՍԱՊԼԻԷՌ

ԵՐԲ մեր պակասութեանցը
վրայ կը վշտանանք առանց զանոնք
ուղղելու, կ'ապացուցանենք թէ
նոյն վիշտը մեր հպարտութենէն ու
անձնատիրութենէն ծագած է:

Աշխարհային գործերու մասին՝
երկչոտ անվստահութիւն մ' ունինք
Աստուածային նախախնամութեան
վրայ. իսկ դալով փրկութեան գոր-

ծոյն՝ յանդուգն վատահուժիւն մը
ունինք իւր ողորմութեանը վրայ :

Այլոց թերութիւններն աւելի
աղէկ կ'ուզուին անոնց համբե-
րութեամբ տանելով, քան թէ գո-
ռողութեամբ կշտամբելով :

Աղօթից նպատակն օրինաց կա-
տարումն է . ուստի՝ այն որ օրի-
նաց պատուիրած մէկ պարտաւո-
րութիւ՝ը կը կատարէ՝ աղօթելէ
աւելի հաճելի բան մը կընէ Աս-
տուծոյ :

Դժուարին է իւր կրից յաղթե-
լը, բայց անկարելի է զանոնք յա-
գեցնել :

ՏԸ ԲՈՒՆՄՕՆԹՎԱԼ

Ինչպէս որ մարդու մը տեսու-
թեան չափը գիտնալու համար պէտք
է գոնէ անոր չափ հեռատես ըլ-
լալ, նոյնպէս մարդու մը գիտու-
թեան չափը հասկնալու համար՝
պէտք է անոր չափ գիտուն ըլլալ :

Ատելութիւնը թերութեանց խո-
շորացոյցն է, սէրը՝ բարի յատկու-
թեանց :

ՄԱՏԱՄ Տ՛ԱՐԲՕՆՎԻԼ

Կան մարդիկ որ ինքզինքնին
բարեպաշտ կը կարծեն, անոր հա-
մար որ դատապարտութեան եր-
կիւղը երբեմն կարգիլէ զիրենք չա-
րիք գործելէ :

Եթէ մարդիկ իրապէս համոզուած ըլլային իրենց կարծեցեալ հաւատքին վրայ, բաց 'ի յիմարնեբէն, ամենքն ալ սուրբ կըլլային :

Տգէտ երեւնալու երկիւղը՝ արդէտ ըլլալէ դադրելու ամենամեծ արդեւքն է :

Կարելի է չը գտնուիր այնչափ կատարեալ մարդ մը որ՝ իւր բարեկամին առիթ չտայ զղջալու իւր բարեկամութիւնն ու վստահութիւնը անոր նուիրած ըլլալուն վրայ :

Կանանց մէջ շատերն անոր համար միայն կ'ուսնին, որպէս զի ըսուի թէ զիտեն, եւ խիստ քիչ փոյթ կը տանին իրապէս սովրելու :

Միշտ ազմկալից եւ միշտ անձուկ կեանք մը վարելն ու իւր բոլոր կենացը մէջ՝ ազատութեան այնչափ հետամուտ ըլլալէ ետեւ՝ վերջապէս իւր ձեռքը շինած չըթայից ծանրութեան տակ ճնշեալ մեռնիլը՝ մարդու ճակատադիրն է :

ՏԸ ԼՍ. ՌՕՇ

Միջին յատկութիւններ գործադրել զիտնալու արհեստը շատ անգամ ճշմարիտ արժանաւորութենէ աւելի հաճաւ կուտայ :

Անդգայ մարդիկ միջին առաքինութեան մը մէջ կը մնան, որ բնաւ չը բարձրացնեն զիրենք :

Այն որ իւր բարեկամին գաղտ

նիքը երեւան կը հանէ, ալ չկրնար
վստահելի ըլլալ :

Առաքինութիւնք մոլութիւննե-
րէն աւելի վստանդաւոր կըլլան՝
երբ գէշ գործածուին :

Մարդիկ կը փափաքին որ բո-
լոր թշուառք յանցաւոր ըլլան, որ-
պէս զի արդարութեան երեւութով
զանոնք երեսի վրայ թողելու կա-
րող ըլլան :

ԱՆՈՆԻՄ

Մեր բանականութեամբը կը
դատենք, եւ մեր բարքովը կը գոր-
ծենք, ահա այս է շատ անգամ
մեր անպատեհութեանց բանալին :

Շատանգամ ապերախտութեանց

ներելով բարիքը լրացուցած կ'ըլ-
լանք :

Անճնասէրը միայն ինքիրմով
կ'ապրի, զգայուն մարդը՝ համայն
ընութեամբ : Երկուքէն ո՞րը ճշ-
մարտապէս խարուած է :

Ի՞նչ ունինք երջանկութենէն :
Յոյսն ու յիշատակը :

ՏԸ ՎԱՆԻԿԻ

Երկու մարդոց իրարու հետ վի-
ճելուն պատճառը՝ անոնցմէ միոյն
տխմար ըլլալն է :

Կարօտութիւնն՝ իրաւանց ըս-
կզբունքն է :

Սիրտը վերաւորողը կրնայ զայն
բուժել :

Բարի ընկերութիւնը սիրող մալ
դը շատ անգամ առանձին կը մնա :

Մտածութիւնը մզիչ մ'է, որուն
մէջ բազմաթիւ խօսքեր մէկի կը
վերածուին :

Մեծ հանճարներն իրենց գոր-
ծերն ուղղելու համար ոչ ումեք
պէտք ունին, այլ միայն ժամա-
նակին :

Չարերը կատաղի շանց կը նմա-
նին. մէջերնէն անցնելու կարող
ըլլալու համար՝ միշտ պէտք է պատ-

բաստ ոսկոր մ'ունենանք անոնց
նեանելու :

Բարեգործութիւն ընելու յա-
մառութիւնը դիւցազնութիւն մ'է :

Այն մարդը որ գեղեցիկ մտած-
ութիւնք մը կը ծնի, արդէն յցուցած
կ'ըլլայ իւր գոյութեան իզճը՝ որ է
օգտակար ըլլալ :

ՏԸ ԼԻՎՈՒԻ

Ազանն իւր ստակը կը պահէ ա-
ռանց վայելելու, խաղամուրը զայն
կը վայելէ առանց պահելու :

Փափկատրտութիւնը զգացում մը
չէ բնաւ, այլ զգացման մը յա-
ռաջ բերած մէկ տպաւորութիւնն է :

Որկրամուտութիւնն անամնոց
կիրքն է . երբ մարդ մը անոնց չափ
կը սնուցանէ իւր մարմինը , յայտ-
նի կը ցուցնէ թէ նա զայն միայն
ունի հոգալու :

Առատաձեռնութիւնը վարձքի
պէտք չունի , իւր ձեռքերէն կըն-
դունի նա իւր վարձքը :

Մարդիկ ալ աւելի կը մաշեցը-
նեն իրենց կեանքը , քան թէ կեան-
քը զիրենք :

Յիմար է այն մարդը՝ որ այն-
պիսի աշխատութեան մը ձեռք կը-
զարնէ , որուն վարձքը մահը կը-
յափշտակէ միշտ :

Գժոխոց մէջն ենք , եւ զայն
աւելի սոսկալի ընելու համար՝ մեր
երեւակայութիւնը երկնից տեսա-
սանը կը բանայ մեզ :

Հառաչանքը հոգոյն ձայնն է :

Շատ դժուար է գիտնալ թէ
ինչ՞ պէտք է ընել այս աշխարհիս
մէջ . եթէ ննջենք՝ չենք ապրիր,
եթէ արթուն մնանք՝ գէշ կ'ապ-
րինք :

Աւելի զիւրից մարդ մը ու-
կի անուր , քան թէ ինչպիսի մտածող
մը զովեաց :

Կիրքը մտքին զայնն է :



Երբ մարդ մը կեանքէն կը ձանձ-
րանայ եւ մահուանէ կը սարսափի ,
կը հետեւի թէ նա ոչ ապրելու եւ
ոչ մեռնելու համար ծնած է :

ՏԸ ԼԱՊՈՒԻՍ ՌՕՇՅՕՐ

Գիտուն մը որ միայն գիտուն է ,
բառագրքի մ'արժէքն անգամ չունի :

Ապերախար կը ծածկէ ինչ որ
կընդունի , վեհանձն մարդն ընդու-
նիլ կը կարծէ ինչ որ կուտայ ,

Մէկու մը թախանձանացը վրայ
չափադանց խորհրդածելը՝ մերժ-
ման պատրաստութիւն մ'է :

Բողորովին անպտուղ սէր եւ բա-
րեկամութիւն չըլլար բնաւ . . .

Այս երկու զգացումները կամ կը
գործեն եւ կամ ամենեւին գոյու-
թիւն չեն ունենար :

Փառասիրութիւնը նենգաւոր սի-
րուհի մ'է , որ զինքը բռնողը կը
խեղդէ :

Ժ. ՍԱՆԻԱԼ ՏԻԻՊԷՅ

Կիրքով պատժելը պատժել չէ ,
այլ վրէժ առնուլ :

Շատ գրքեր կը նմանին թիւ ազ-
նուականներուն՝ ոչոնք իրենց ան-
ուամբը միայն կը փայլին :

Աղքատաց թշուառութիւնը՝ գիր-
ջանկութիւնն հարստութեան մէջ
կարծելն է , մեծատանց թշուառու-



Թիւնն ալ՝ զայն անոր մէջ չը գըտ-
նելն է :

Մտածմունք շէնքի մը նիւթերն
են , ոճը՝ անոր ճարտարապետու-
թիւնը :

ՊՕՇԷՆ

Փառքը գէշ գործերը կը մաքրէ ,
բայց անոնց արատը կը մնայ :

Այն որ խօսիլ կը փութայ՝ զայլս
լռելու կը հրաւիրէ , բայց ոչ զինքը
մտիկ ընելու :

Մտաց սահմանը կրնայ դատուիլ
հարցումներու , նրբամտութեան եւ
պատասխաններու միջոցաւ :

Կուզես գիտնալ թէ ինչ կը մը-
տածեն մարդիկ , մի ուշադիր ըլլար
անոնց խօսքին , այլ գործքերնին
քննէ :

Շատ մարդիկ այնպէս կը վար-
ուին իրենց բարեկամացը հետ , ինչ-
պէս խաղի թղթերուն հետ , զորս՝
խաղը վերջանալուն պէս՝ մէկդի
կը նետեն մինչեւ անդամ եթէ շա-
հած ալ ըլլան :

Աշխարհս տեսարան մ'է , ուր
կը մտնենք , կը գիտենք , կը ճանձ-
բանանք եւ դուրս կելենք :

Երկչոտութիւնն յառաջ կուգայ
հաճոյանալու փափաքէն եւ չը յա-
ջողելու երկիւղէն :

Որչափ աւելի խօսինք մեր ար-
ժանաւորութեանը վրայ, նոյնչափ
նուազ հաւատալի կ'ըլլանք:

Գլխօն բարեկամներ ունենալուն
վրայ կը պարծի, բայց անգամ մը
գո՞վէ զանոնք իւր առջեւ, տես թէ
որչափ պիտի շփոթի:

Փառասիրութիւնն աւելի գե-
րազանցուելու երկիւղէն յառաջ
կուգայ թերեւս, քան թէ ուրիշ-
ները գերազանցելու փափաքէն:

Եթէ աւելի քաղցր է սիրել
քան թէ սիրուիլ, պատճառն այն
է որ՝ սրտին վայելմունքներն աւե-
լի երջանիկ կընեն զմեզ, քան թէ
անձնասիրութեան վայելմունքները:

Անոնք որ կը կարծեն թէ ըս-
տակն ամեն բան կընէ՝ ստակի հա-
մար ամեն բան ընելու տրամադիր
են անշուշտ:

Գերիներն ու բռնաւորները փո-
խադարձ երկիւղ կը պատճառեն
միմեանց:

Երբ անարգանք կը բաւեն ա-
տելութեան՝ վրէժխնդրութիւնն ա-
նօգուտ է անոր:

Կրից լռութիւնը շատ անգամ
ծուլութեան քան թէ բանականու-
թեան գործն է:

«Թշնամուոյ մը ձեռքէն պրծելու

լաւազոյն միջոցը՝ զանի բարեկամ
ընելն է », ըսաւ Հենրիկոս Ի.

Ներջանիկ մարդիկ պակասութիւն
մ'ունին զոր ընաւ չեն ուզղեր, այն
է կարծելը թէ թշուառք իրենց
պակասութեամբը թշուառ կըլլան
միշտ:

ՊՕՆԷՆ

Փիլիսոփայութիւնը վարուց մէջն
է չէ թէ խօսքին:

Իմաստնոյն պատուէրները իւր
վարուցը մէջն են:

ԱՊԷԼ ՏԻԻՖՈՒԷՍՆ

Անոնք որ շատ քիչ անգամ կը
մտածեն՝ կը զարմանան ու կը հիա-
նան իրենց գաղափարաց վրայ:

ՎՕՎՆԱԲԿ

Ծոյլերը միշտ բան մը ընելու
փափաքը միայն կունենան:

Խիտ մեծ սխալ մ'է կարծել թէ
անգործութիւնը մարդս աւելի եր-
ջանիկ կընէ: Առողջութիւնը, կու-
րովամտութիւնը, սրտի անգործու-
թիւնը աշխատութեան արդիւնքն
են:

Առանց անմեղութեան ոչ հան-
գիստ եւ ոչ իրական երջանկու-
թիւն կայ աշխարհիս վրայ:

Ուր որ մոլութիւնը կը թագա-
ւորէ, հոն չեն կրնար մուտ գանել
մտքի անգործութիւն եւ ուրախու-
թիւն:

Երանի անոնց, որ համեստ ծը-
նած են: Ձկայ բան մը՝ որ մար-
դիկն այնչափ տկար ու փոքրիկ
ցուցնէ, որչափ մնապարծութիւնը:

ՖԷՆԸԼՍԵ

Վայ այն մնապարշտին, Տէր,
որ քենէ հեռանալով՝ առանց Աս-
տուծոյ, առանց յուսոյ եւ առանց
յաւիտենական մխիթարութեան
կ'ապրի:

Խոյս տուէք այն երկու մատ-
նիչներէն, որք են ձանձրոյթ եւ
անհամբերութիւն:

Մեղիութիւնն ու անգործու-
թիւնը՝ մարդուս ամենազեղեցիկ
բնաւորութիւններն իսկ կ'ապա-
կանեն:

Մեղիութիւնը կը բառնայ մար-
դուս վրայէն ամեն ինչ որ կրնայ
զեղեցիկ ձիրքեր յօրինել:

Բնութեան դէմ կը մեղանչէ այն
մարդը՝ որ իւր հայրենեաց դէմ
դէնք կը բարձրացնէ:

Բան մը չկայ այնչափ ազնիւ,
փափուկ, մեծ եւ դիւցազնական,
որչափ ճշմարիտ քրիստոնէի մը
սիրտը:

Ճշմարիտ փառքը իմաստութեան
փառքն է:

Անկարելի է առաքինութիւնը
տեսնել առանց դայն սիրելու եւ

զայն սիրել՝ առանց երջանիկ ըլլալու :

Սիրան ու խիղճը երջանկութեան ճշմարիտ աթոռներն են :

Իմաստունն աշխատութեան միջոցաւ կը պատրաստէ իւր զբօսանքը եւ զբօսանաց միջոցաւ կը հանդիս իւր աշխատութենէն :

ՄԱՍԻՅԼԵՅՈՆ

Հողւոյ անմահութիւնն աշխարհիս բոլոր ժողովրդոց հաւատքը եղած է միշտ եւ է տակաւին :

Ժ. Ժ. ՌՈՒՍՕ

Մարմնոյ գեղեցկութիւնը նման է ծաղկի մը՝ որ առաւօտուն կը

բացուի եւ երեկոյին թառամելով ոտից կոխան կըլլայ, բայց հողին՝ աստուածային անթառամ գեղեցկութեան պատկերն է :

Համբերութիւնը դառն, բայց իւր պտուղը քաղցր է :

Անդգայ անգործութեան պտուղը ձանձրոյթ է միայն, իսկ աշխատասէր կենաց պտուղը՝ քաղցր հանգստեան մը հրապոյրն է :

Առաքինութեան ամենամեծ ըսքանչելիքները՝ հայրենեաց սիրոյ արդիւնքն են :

ՎՕԼԹԻՐ

Բարեգործութեանց վարձանատոյց Աստուծոյ մ'ընծայուած հա-

ւատքը՝ մարդկային ազգին օգտա-
կարագոյն եղող հաւատքն է :

—

Խիստ կարեւոր է որ՝ արարիչ,
վարձահատոյց եւ վրէժխնդիր գե-
րագոյն էակի մը գաղափարը խոր
տպաւորութիւն մ'ըրած ըլլայ մտաց
մէջ :

—

Տգիտութիւնը՝ մարդկային ազ-
գին ամենամեծ հիւանդութիւնն է :

ՄԱՏԱՄ ՏԸ ՄԷՆԹՂՆՕՆ

Անհամբերութիւնը սրտերը կը
դառնացնէ եւ կ'ապականէ, քաղց-
րութիւնը զանոնք կը զօրացնէ :

ԼԷՎԻ

Ձանձրոյթն հիւանդութիւն մ'է,
որուն դարմանն է աշխատութիւնը :

ՌՕԼԷՆ

Պատմութիւնը առաջին վար-
ժ պեան է, զոր պէտք է տղայոց
մալ, ինչու որ զանոնք զուարճա-
ցընելու եւ կրթելու, անոնց միտքն
ու սիրտը զարգացնելու եւ օգտա-
կար ու զուարճալի անթիւ դէպքե-
րով անոնց յիշողութիւնն հարստա-
ցընելու կը ծառայէ :

—

Առաքինութիւնը մարդուս ճշ-
մարիտ բարիքն է եւ նա միայն
ճշմարտապէս մեծ եւ յարգելի կը-
նէ զանի :

—

Ամենէն մեծ ու գովելի բանը՝
պատիւն ու անբռութիւնն է :

ՄԱԼԸ ՊՈՍՆՇ

Մուլութիւնն ամեն մուլութեանց
տեղի կուտայ :

Տ՛ԱԿԷՍՕ

Գիտութիւնը՝ իբրև հաւատա-
րիմ եւ արագընթաց առաջնորդ մը՝
գաւառէ գաւառ եւ թագաւորու-
թենէ թագաւորութիւն կառաջ-
նորդէ զմեզ . կը պարզէ մեր առջեւ
նոցա օրէնքները , բարքը , կրօնքը ,
եւ կառավարութիւնը :

Ամենէն արգասաւոր երկիրն իսկ
փուշ միայն յառաջ կը բերէ՝ երբ
երկրագործն անփոյթ կըլլայ նորա
բնական արգասաւորութիւնն ար-
դիւնաւորելու :

ՎՕՎՆԱՐԿ

Յարեօրաութիւնը՝ բարիք գոր-
ծելու եւ չարեաց ներելու յօժա-
րութիւն մ'է :

ՖԷՆԸԼ ՕՆ

Որինասիրութիւնը ամեն առա-
քինութեանց աղբիւրն է :

Պէտք է պարզ ըլլալ եւ բնաւ
միտ չլինել անձնասիրութեան խոր-
հուրդներուն :

Ուր եւ ինչ վիճակի մէջ ալ որ
գտնուի մարդ՝ միշտ ազատ կըլլայ ,
բաւական է որ Աստուծմէ եւ մի-
այն Աստուծմէ երկնչի :

Գլխաւոր խոհեմութիւնը՝ քիչ խօսեհն ու աւելի իւր վրայ քան թէ այլոց վրայ չը վստահին է :

Ճշմարիտ քաջասրտութիւնը կըրնայ միշտ հնարք մը գտնել աղետից դէմ :

Երբ անգամ մը խաբած ես մէկը, ալ ոչ ոք կը հաւատայ խօսքիդ :

Ուղղամտութիւնը՝ անօգուտ խօսքերն ՚ի բաց մերժելու եւ քիչ քառերով շատ բան ըսելու վրայ կը կայանայ, հակառակ անոնց՝ որոնք շատ խօսքերով քիչ բան կը հասկցնեն :

ՖԷՆԸԼՈՏԵ

Մնասպարծութիւնն աղէկ բան մը

չարտադրեր, եւ հպարտութենէն մոռութիւններ միայն կ'ուզասուի :

Թշուառութենէ պրծելու համար խոհեմութիւն եւ անոր դիմադրաւելու համար քաջասրտութիւն պէտք է :

Կեանքն ըստ ինքեան բան մը չէ, իւր արժէքը իւր գործածութենէն կախումն ունի :

Կրօնից մոռացութիւնը՝ իւր ամեն պարտուց մոռացութեանը կառաջնորդէ զմարդ :

Որչափ քաղցրութիւններէ զըրկուած է այն, ուսկէց կրօնքը կը պակսի :

ՄԱՏԱՄ ՏԸ ՄԷՆԹԸՆՅՈՅ

Խիստ դիւրաւ կիյնանք մոլու-
թեան մէջ, բայց շատ դժուարաւ
կրնանք անկէց դուրս ելլել :

Խօսէ, գրէ, գործէ, մտածէ
այնպէս, ինչպէս որ պիտի ընէիր
երբ հազար ախանառես վկայ ու-
նենայիր :

ՄԷՆԹ-ԷՎՈՒՐՄՅՈՅ

Տղխտութիւնը շատ պատուհներ
ունի, որոց առաջին եւ գլխաւորն
է անգործութիւնը, ուսկէց կը ծը-
նին ամեն մոլութիւնք :

Գրքերն այն բաներն են հող-
ւոյն, ինչ որ է սնունդը մարմնոյն :

ՏԻԻՔԼՕ

Խիղճը կը խօսի այն ամեն մտ-
դոց, որոնք մոլութեանց յաճա-
խութեամբն ինքզինքնին անար-
ժան ըրած չեն զայն լսելու :

Ինչ որ օրէնք կը պահանջեն,
ինչ որ բարք կը պատուիրեն եւ
ինչ որ խիղճը կը ներշնչէ՝ սա հան-
րածանօթ առածին մէջ ամփոփ-
ուած է, « մի՛ ըներ ուրիշին ինչ
որ չես ուզեր որ քեզ ընեն » :

Չանանք 'ի բաց մերժել մենէ
ինչ որ այլոց անտանելի եւ մեզ
վտանգաւոր կրնայ ըլլալ :

Մարդ որչափ աւելի յառաջ երթայ առաքինութեան մէջ, այնչափ աւելի կզգուշանայ՝ սնասպարծութեանէ եւ այնչափ աւելի կը հասողութի թէ իւր պարտքը միայն կը կատարէ :

Ժ. ՏԸ ՄԷՍԹՐԸՌ

Կարելի է բերկրութեամբ չըզիտել այն մարդուն երջանկութիւնը՝ որ ամեն օր անկողին մտնելէ առաջ կրնայ ինքնիրեն ըսել. « օրս չը կօրսնցուցի », որ բարիք մը գործած ըլլալու վստահութեամբ կը ննջէ եւ որ կը զարթնու լաւագոյն ըլլալու նորանոր զօրութիւններ զգեցած :

Այս աշխարհս մշտնջենաւոր նեղութիւն մ'է, եւ ով որ անկէ ձանձրանալ չը գիտեր՝ բան մը չը գիտեր :

ԼԱ Պ ԻԻՅԵՒ

Քաղաքավարութիւնը դրսէն այնպէս կը ցուցնէ զմարդ, ինչպէս որ պէտք էր ըլլար ներքնապէս :

—

Ծաղրածութիւնը շատ անգամ մտքի աղքատութիւն է :

ՖՕՆԹՐԵՆԵԼ

Կատարեալ տգիտութիւն է հըպարտ ըլլալը :

—

Պարզասիրութիւնը՝ ճշմարիտարժանեաց նշանաբաններէն մին է :

ԱՆՏՈՒԻԷ

Ուսանելու ամեն եղանակներուն մէջէն ամենէն քիչ ճանճրացընով եղանակը մտիկ ընելն է :

Լեզուն շարժելու համար միայն խօսիլ . ինչ ողորմելի գործածութիւն խօսքի, մարդուս այն գեղեցիկ նշանին՝ զոր Աստուած իւր արարածոց մէջէն անոր միայն պարգեւած է :

ԼԱ ՌՕՇՅՈՒԳՕ

Եթէ մեք թերութիւններ չունենայինք, այնչափ հաճութիւն չը պիտի զգայինք այլոց թերութիւնները տեսնելով :

ՄՕՆԹԷՍԻԷՕ

Զուարճութեանց ու հաճոյից ե-

տեւէն վաշկու առեն՝ շատ անգամ մարդ նեղութեանց միայն կը հանգիպի :

ՊՕՍԻՅԷ

Ով որ մէկդի կը թողու կրօնից վսհանը, պատերազմի ստին չը կրնար ինքզինքը պաշտպանել :

ԳՕՆԻԱ ՏՂ ԲԱԼԱԺՕ

Կուղէք հաւատք ընծայել կրօնից, մի կարգաք ընաւ զայն քըննադատող գրքերը :

Մտաի ուղղութիւնը եւ մտաց կորովութիւնը ամենամեծ արդեւորներն են քաղաքավարութեան, սակայն որդեակ իմ, դուն միշտ բարեւաւէ սիրտդ ու միտքդ :

Բնաւ մեծ չերեւիր ինձ այն
մարդը, որ կիմացնէ ինձ թէ ըս-
տորին եմ:

ԱՄՐԼՕ ՏԸ ԼԱ ՀՈՒՍԷՅ

Փորձառութիւնը լաւագոյն խոր-
հրդատումէ, բայց շատ ուշ կը
հասնի:

Խօսակցութեան մէջ զայլս տա-
ղանդաւոր ցուցնելու յօժարամտու-
թիւնը՝ իւր տաղանդն զարմանալի
երեւցնելու ճշմարիտ գաղտնիքն
է:

ՌԻՎԻԷՌ ՏԻԻՖՈՒՆՍԻ

Այն որ միշտ ծանր երեւնալու
ջանք կրնէ, իւր կարծածէն աւե-
լի ծաղրելի կըլայ:

Աշխարհիւս կէտը չարախօսելէ
հաճոյք կ'զգայ, միւս կէտն ալ չա-
րախօսութեանց հաւատալէ:

Առնուազն դար մը պէտք է ապա-
րիլ զաշխարհս փոքր ինչ ճանչնա-
լու համար, եւ ապա ալ աւելի
պէտք է ապրիլ այն ծանօթութե-
նէն օգուտ քաղելու համար:

ԷԹԻԷՆ ՔԷՅՈՆԻԼԷ

Յիմարներն այնպէս կընդունին
իմաստնոց խրատները, ինչպէս ի-
մաստունք յիմարացը:

ՄԱՏԱՄ ՏԸ ԲԻԻԶԻԷ

Խիստ իմաստուն գեղեցիկ կին
մը՝ կը մնայ իւր առաքինութեամբը
եւ այն հարստութեամբ՝ որով ծը-
նած է. երբ զայն աւելցնել ուզէ՝

պէտք է այն զոհողութիւնն ընէ ,
 զոր պճնասէր կանայք լաւ կը
 ճանչնան : Օրինաւորապէս զմեզ
 բարձրացնելու միջոցները ձեռքեր-
 նուս առնուեցան , եւ այն միջոց-
 ներէն հատ մը միայն մնացած է
 մեզ , որ բարձրացնելու ատեն ան-
 դամ զմեզ կը նուաստացնէ եւ կա-
 նանց յետինը կընէ :

Պէտք է տեսութեան երթալ
 թշուառաց զանոնք միսիթարելու
 եւ կամ անոնց բարիք մ'ընելու հա-
 մար , բայց նոցա գործոցը մասնա-
 յից ըլլալու չէ , զի թշուառու-
 իւնը տարախոխիկ ժանտախտ մ'է :

Գիտութիւնը բաւական չէ ի-

մասանոյ մը , պէտք է որ ընկերա-
 կան առաքինութիւններ ալ ունե-
 նայ , առանց որոց աղէկ կընէ որ
 իւր խուցը մնայ :

Գանդաղ միտք մը նման է այն
 կեղծ փոթորկին՝ որ փայլատա-
 կունք միայն յառաջ կը բերէ :

Արհեստը՝ կատարելութեան տա-
 նող ճանրուն գրեթէ կէսը միայն
 կը շինէ :

Արդարամտութիւնը ընտիր գա-
 տողութեան մ'ապացոյցն է :

ՄՍՏԱՄ ՏԸ ՍԱԼՄ

Լուսաւորութիւնք շիւրաւ կը
 ներգործեն մտաց վրայ , եւ զըժ-

ուարաւ՝ սովորութեանց վրայ, զի
 ամեն մարդոց սիրելի է լուսաւոր-
 ուիլ եւ քիչեր կան որ իրենց 'ի
 մանկութենէ ստացած նախապա-
 շարմունքներէն եւ ունակութիւն-
 ներէն հրաժարելու քաջութիւնն
 ունին :

Իւրցազն անունը՝ մեծամեծ պա-
 րագայից մէջ՝ մեծ զգացումներէ ներ-
 շնչեալ գեղեցիկ գործերով կ'ստաց-
 ուի :

ՏԸ ՍԹՍԱՍԱՌ

Շատ մարդիկ իրենց ըրած բա-
 րեաց յիշատակը մշտնջենաւորելու
 համար՝ անջնջելի տառերով կ'ար-
 ձանադրեն զայն, իսկ ընդունած
 բարիքն ինչ ուրբ մագաղաթին վրայ
 մատիտով մ'անդամ չեն նշանակեր :

Շատ մարդիկ՝ ուրիշ ծառայու-
 թիւններ ալ ընդունելու ակնկա-
 լութեամբ է որ իրենց մատուց-
 ուած ծառայութեանց երախտագի-
 տութիւն ցոյց կուտան :

ՏԻԻՔ ՏԸ ԼԵՎԻ

Երբ վատի մը գէմ վշտանաս,
 ընաւ մի կասկածիր որ նա յաւի-
 տեան քու կորուստդ պիտի ուղէ,
 որովհետեւ կ'երկնչի վրէժխնդրու-
 թիւնէդ, եւ երկիւղը չը ներեր :

Երբ փառասէրք մեծամեծ պաշ-
 տօններու համին, կը ջանան որ՝
 իրենց պաշտօնակիցք միջակ մար-
 դիկ եւ իրենց ստորակարգեալք
 զօրաւոր մարդիկ ըլլան :

Այնչափ նուաստութիւններ եւ
 անիրաւութիւններ տեսնելով չենք
 կարող հասկնալ թէ՛ մարդիկ ծա-
 ռայութեան թէ՛ բռնութեան աւե-
 լի հակամէտ են :

Սչխարհս մյնչափ ապակոնեալ
է որ՝ չարիք չը գործեհնուս համար
միայն՝ բարեգործ մարդու համբաւ
կ'ստանանք :

Երեւակայութիւնը կը նկարէ ,
միտքը կը բազդատէ , ճաշակը
կ'ընտրէ , տաղանդը կը գործադրէ :

ՔԷՌՍԹՈՒՒ

Մարդիկ շտա քիչ պիտի ցաւին
աչխարհիս մէջ ունեցած վիճակ-
նուն վրայ՝ երբ իւրաքանչիւր ոք
իւր խղճին անկեղծութեամբը քննէ
նոյն վիճակին արժանի կամ անար-
ժան ըլլալը :

Սնբարոյական մարդիկ՝ միշտ
դաւադրութեան մը համար միայն
կը միանան ու կը բարեկամանան :



« Ազգային գրադարան



NL0108390

